ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հոկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

132
(2982)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԵՆ ԳՏՆՈՒՄ



Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության շուրջ ՔՊ-ում նոր խմորումներ են տեղի ունենում: «Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել էր, որ ՔՊ խմբակցության պատգամավորները ստորագրահավաք են իրականացնում Գրիգոր Մինասյանին հեռացնելու համար, սակայն 71 պատգամավորներից 27-ն է միայն միացել նախաձեռնությանը: Ավելի վաղ հայտնել էինք նաեւ, որ Գրիգոր Մինասյանի դեմ այս արշավի կազմակերպիչն է ՔՊ-ական Արփի Դավոյանը՝ Անդրանիկ Քոչարյանի հանձնարարությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել, որ Մինասյանի դեմ դավեր նյութողների թվում է նաեւ Լուսինե Բադալյանը՝ Լուլուն: Արփի Դավոյան-Լուսինե Բադալյան-Անդրանիկ Քոչարյան եռյակը կուսակցության դռնփակ նիստերից մեկի ժամանակ հրապարակավ բողոքել է, որ դժգոհ է նախարար Գրիգոր Մինասյանի աշխատանքից, քանի որ նա Միքայել Մինասյանի եղբայրն է, եւ հայտարարել են, որ այդ պատճառով էլ նրա պաշտոնանկության հարցով ստորագրահավաք են սկսելու: Սակայն եռյակի այս նախաձեռնությունն այնքան էլ միանշանակ չի ընդունվել ՔՊ-ում, անգամ Նիկոլ Փաշինյանն է ասել, որ ինքը գոհ է Գրիգոր Մինասյանի աշխատանքից ու պատգամավորներից պահանջել է՝ հիմնավոր պատճառներ ներկայացնեն, թե ինչու նախարարը պետք է պաշտոնանկ արվի:

Ստորագրահավաք նախաձեռնողներն էլ, որպես պատճառ, նշել են նախարարի եղբոր՝ Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի գործոնը: Ներկա ՔՊ-ականները, սակայն, ասել են, որ Գրիգոր Մինասյանն արդեն երկու տարի է պաշտոնավարում է, ու ամենեւին նորություն չէ, որ Միքայել Մինասյանի եղբայրն է. ուստի չի կարող դա պաշտոնանկության համար լուրջ հիմք ընդունվել, ավելին՝ կարող է ծիծաղելի դիտարկվել:

Անդրանիկ Քոչարյանն էլ այդ պահին հանկարծ թիմակիցների մոտ հայտարարել է, թե Գրիգոր Մինասյանը Բեռլինում բնակարան է ձեռք բերել, ու թիմակիցներին վստահեցրել է, որ կոռուպցիոն միջոցներով է դա եղել, սակայն դարձյալ չի հիմնավորել իր ասածը: ՔՊ-ականներն էլ իրենց հերթին հակադարձել են, որ պետք չէ «օդում խոսել», գոյություն ունի իրավապահ համակարգ, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, թող դիմեն, եթե իսկապես ապացուցվի, որ նախարարը կոռուպցիոն միջոցներով է բնակարան ձեռք բերել, կամ բերել է իսկապես, ապա իրավապահներն արդեն այդ հարցով կզբաղվեն:

Կարճ ասած՝ նախարարի պաշտոնանկության մասով ներիշխանական խարդավանքները դեռ շարունակվում են. Նիկոլ Փաշինյանը հիմնավորումների է սպասում:

Հավելենք նաեւ, որ երեկ՝ երեկոյան, ԱԺ քառօրյա նիստից առաջ ՔՊ խմբակցության նիստ է հրավիրվել, որի ժամանակ Արփի Դավոյանը դիմել է Հայկ Կոնջորյանին՝ տեղեկանալու՝ արդյոք կա նորություն ստորագրահավաքի փաստաթղթերից, Կոնջորյանն արձագանքել է, որ փաստաթղթերը փոխանցել է Նիկոլ Փաշինյանին, ու հաջորդ քայլը կքննարկեն արդեն վարչությունում:

Այժմ սպասում են պատասխանին:

Երեւանի քաղաքապետարանը միջոցառման համար ավելի շատ գումար է ծախսել, քան Երեւանում նոր ծառերի տեղադրման համար: Սեպտեմբերի 17-24-ը բացօթյա ձեւաչափով Թումանյանի անվան այգում կայացավ «Երեւան կլասիկ ֆեստ» խորագրով սիմֆոնիկ նվագախմբերի երեւանյան միջազգային առաջին փառատոնը, որին մասնակցության հայտ էին ներկայացրել աշխարհի լավագույն եւ ճանաչված նվագախմբերը: Հայաստանյան երաժշտախմբերի հետ նույն հարթակում հանդես եկան Միլանի Լա Սկալա թատրոնի «Ակադեմիա» նվագախումբը, Սանկտ Պետերբուրգի հռչակավոր ակադեմիական ֆիլհարմոնիկ նվագախումբը, ելույթ ունեցան Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախումբը եւ երգչախումբը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, Երեւանի քաղաքապետարանի «Երեւան» պատանեկան սիմֆոնիկ նվագախումբը: Ելույթների այս շքերթը, որով ներկայանում էր Yerevan Classic Fest միջոցառումը, Երեւան քաղաքի բյուջեի համար արժեցավ 339 մլն 986 հազար դրամ՝ գրեթե 877 հազար ԱՄՆ դոլար: Տվյալները «Ժողովուրդ» օրաթերթը վերցրել է պաշտոնական աղբյուրներից: Համեմատության համար նշենք, որ գարնանը տնկված նոր ծառերի՝ Սակուրայի, Սոսիի, Թխկիի, Թեղիի, Կատալպայի, Սաֆորայի, Ալբիցիայի, Ձիակասկի, Հուդայածառի, Կեյլեթերիայի համար նախատեսվել էր, 148 մլն դրամ՝ գրեթե 382.000 դոլար: Ստացվում է, որ Երեւանի բյուջեի համար քաղաքի ծառերը կտրելը, էտելը եւ նորը տեղադրելն ավելի էժան է, քան մի քանի օր համերգ կազմակերպելը: Եվ այստեղ է, որ Երեւանի Կանաչապատում ՀՈԱԿ-ի ղեկավար Բեգոյանի աշխատանքն իր «հմայքով» առաջ է գալիս:

ՀՀ փորձաքննությունների կենտրոն ՊՈԱԿ-ում թեեւ բազում աշխատակիցներ կան, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ պաշտոնական կայքում ընդգծված է ՔՊ-ական պատգամավոր Արմեն Խաչատրյանի որդու «կերպարը»: Տասնյակ բաժնի պետերի, այլ աշխատակիցների ֆոնին պատգամավորի որդու՝ Էդուարդ Խաչատրյանի լուսանկարն է «զարդարում» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքը: Անշուշտ, սրանք մանրուքներ չեն եւ արտացոլում են որոշ ՔՊ-ականների արագ անցումը բուրժուական կարգավիճակի: Դե իսկ Արմեն Խաչատրյանը կարկառուն «նախկին» է, «նախկինների թալանի դարբնոց»՝ ՃՈ բարձրաստիճան պաշտոնյա, իսկ հիմա իրեն ազնիվ հռչակած կերպար է դարձել, որի որդու բարեհաջող կարիերայի եւ աշխատավարձի մասին «Ժողովուրդ»-ը ավելի վաղ գրել էր՝ ներկայացնելով Էդուարդ Խաչատրյանի հայտարարագրերը՝ մասնավորապես, որ վերջինս միանձնյա սեփականությամբ հողամաս է գնել, որը գտնվում է Արմավիրի մարզի Մայիսյան գյուղում, եւ ձեռք է բերվել 2021 թվականին, սակայն 2022 թվականին օտարվել է 5 մլն դրամով Շանթ Պետրոսյանի կողմից: Տարեսկզբին պատգամավորի որդին ունեցել է 2 մեքենա՝ Toyota մակնիշի, 2015 թվականի արտադրության, որը ձեռք է բերվել 2019 թվականին, եւ 2011 թվականի արտադրության Nissan մակնիշի ավտոմեքենա ձեռք բերված 2021 թվականին: Տարվա ընթացքում պատգամավորի որդին ձեռք է բերել եւս մեկ մեքենա՝ 2002 թվականի արտադրության Volkswagen, որը նույն տարում օտարվել է 500 հազար դրամով. նույն տարում օտարվել է նաեւ Nissan մակնիշի մեքենան 3 մլն 500 հազար դրամով: Տպավորություն է, թե Էդուարդ Խաչատրյանը մեքենաների առքուվաճառքի բիզնեսով է զբաղված եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ոստիկանությունում հաղորդում է ներկայացվել այն մասին, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վարչական գործերով կայացրել է 16 որոշումներ, որոնցով ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական բյուջեի միջոցների հաշվին քաղաքացիներին բնակարան ձեռք բերելու համար հասանելիք անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրել: ՀՀ ֆինանսների նախարարությունը, սակայն, ֆինանսավորում չի տրամադրել՝ չկատարելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման պահանջները: Արդյունքում, իրավապահները սկսել են քննություն: «Ժողովուրդ» օրաթերթը քաղաքացիների կողմից ֆինանսների նախարարության դեմ ներկայացված հաղորդման գործով դիմեց նախարարություն, սակայն ֆիննախարարությունից հայտնեցին. «ֆինանսների նախարարությունը նշված վարչական գործերով կայացված դատական ակտերի հասցեատեր չի հանդիսանում: Ավելի մանրամասն պարզաբանումներ ստանալու համար առաջարկում եմ դիմել պաշտպանության նախարարություն»: Ստացվում է, որ պետական կառույցները միմյանց վրա են գցում հարցը, իսկ դատարանի որոշումը չի կատարվում, ինչը քրեորեն պատժելի արարք է: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ ՀՀ ՊՆ՝ մեկնաբանության համար սակայն մեր հեռախոսազանգերն ու հաղորդագրությունները մնացին անպատասխան:

ԶՐՈՒՅՑ

«ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՑՎԱԾՔԸ ՉԵՄ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ»

ArmLur.am-ի տաղավարում երեկ ԱԻՄ կուսակցության առաջնորդ Պարույր Հայրիկյանն էր:



Խոսել ենք Սրբալույս Մյուռոնի օրհնությանը եւ Մայր Տաճարի վերաօծման արարողությանը իշխանությանը հրավիրելու, Նիկոլ Փաշինյանի եւ Թուրքիայի նախագահի հանդիպման, ԵՄ-ին անդամակցելու համար կազմակերպված հանրաքվեի եւ այլնի մասին:

-Պարոն Հայրիկյան, 12 տարվա վերանորոգումից հետո Մայր տաճարը վերջապես բացեց իր դռները. նախորդ շաբաթ տեղի ունեցան տաճարի Վերաօծման եւ Մյուռոնօրհնեքի սուրբ արարողությունները: Թեեւ թվում է, որ պետք է որեւէ տարակարծություն չլիներ եկեղեցու այս իրադարձության մասով, բայց անգամ սա կռվախնձոր դարձավ քաղաքական տարբեր գործիչների միջեւ: Հիմնական կռիվն այն էր, որ մի մասն ասում էր՝ կաթողիկոսը չպետք է արարողություններին հրավիրեր իշխանությանը, մյուս մասն էլ կարծում էր, որ այս արարողությունները լավ առիթ էին, որպեսզի վերջապես եկեղեցու եւ իշխանությունների միջեւ առկա տարձայնությունները հարթվեն: Ի՞նչ կասեք սրա առնչությամբ, Դուք ներկա եղե՞լ եք միջոցառումներին:

-Ես հրավիրված էի մյուռոնօրհնեքին, որին մասնակցել եմ, մյուսն արդեն ազատ միջոցառում էր: Ինչ վերաբերում է Ձեր նշած խոսակցություններին՝ նույնիսկ տեղեկություն չունեմ: Կեսարինը Կեսարին, Աստծունը Աստծուն. եւ որքան քիչ ես միջամտում այլ գերատեսչության խնդիրներին այդքան ճիշտ ես:

Իսկ ընդհանրապես քրիստոնեական արժեհամակարգի հիմնական դրույթներից մկեն այն է, որ հաշտություն սփռի, եւ նրանք, ովքեր ներողամտության, հաշտության նկատմամբ խիստ են տրամադրված, նրանք առավելեւս պիտի հասկանան, որ իրենք ճիշտ հարցադրումներ չեն կատարում:

-Դուք՝ որպես քաղաքական գործիչ, ի՞նչ եք կարծում, ճի՞շտ էր իշխանություններին հրավիրելը:

-Եկեղեցին պատկանում է բոլորին, իր լույսը սփռում է բոլորի վրա, հետեւաբար ում կուզեր՝ կհրավիրեր: Եթե այս հարցում խորանանք, պիտի հիշենք՝ մեր Տիրոջը երբ հարցնում են, օրինակ, մաքսավորների հետ հանդիպման մասին, նա պատասխանում է՝ իրենց ավելի է պետք: Այսինքն՝ խտրականություն չպետք է դնել բարիք տարածելիս, այնպես որ ես եկեղեցու կեցվածքը չեմ քննադատում:

-Պարոն Հայրիկյան, մի ուշագրավ միջադեպ տեղի ունեցավ, որ դեռ պատարագը չավարտված՝ իշխանությունները հրապարակավ լքեցին արարողությունը, չսպասեցին անգամ ավարջին, սա ի՞նչ էր, ի՞նչ էին ուզում սրանով ցույց տալ:

-Ես չեմ կարծում, որ այդտեղ հատուկ միտում կար: Գիտեք, որ այս իշխանություններից որեւէ լավ բան դժվար է սպասել, իմ կարծիքն է սա, կարող եմ եւ սխալվել, բայց, ըստ իս, նրանք բացասական ազդեցություն ունեն մեր ազգային հանրային քաղաքական կյանքում, սակայն այս պարագայում հատուկ որեւէ բան կարող ենք չտեսնել: Գուցե պլանավորված գործեր ունեին, գնացին:

-Պարոն Հայրիկյան, նախորդ շաբաթ եւս մի կարեւոր իրադարձություն տեղի ունեցավ: Նյու Յորքում հանդիպեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ թուրքիայի նախագահը: Այս դեպքում մեծ աղմուկ բարձրացրեց լուսանկարը, երբ Փաշինյանը կրծքին էր սեղմել Էրդողանի գիրքը:

-Չեմ կարծում եւս, որ այդտեղ հատուկ միտում կար: Պատկերացնենք՝ գիրք ես ստացել, այդ պահին լուսանկարում են, եւ ժպտում ես. դրա համար չէ որ պետք է քննադատել պետության ղեկավարին, այլ իր ընդհանուր կեցվածքի համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության հարցը շարունակում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության օրակարգում մնալ:

Նշենք, որ իշխող խմբակցության 71 պատգամավորներից 27-ն է միացել Գրիգոր Մինասյանին պաշտոնանկ անելու ստորագրահավաքին:

Ստորագրություններն արդեն իսկ ներկայացվել են խմբակցության ղեկավար կազմին, վերջիններս էլ առաջիկայում դրանք պետք է ներկայացնեն կուսակցության ղեկավարին՝ Նիկոլ Փաշինյանին:

Հիշեցնենք, որ Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության նախաձեռնողը պատգամավոր Արփի Դավոյանն է: Վերջինս ՔՊ նախաձեռնող նիստերից մեկի ժամանակ հենց Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ դժգոհել է Գրիգոր Մինասյանից եւ նրա պաշտոնանկության հարցն է բարձրացրել:

Նիկոլ Փաշինյանն էլ թիմակիցներին ասել է՝ եթե բավարար չափով ստորագրություններ լինեն, ապա պատրաստ է քննարկել հարցը:

Կուսակցության կանոնադրության համաձայն՝ ցանկացած պաշտոնյայի պաշտոնանկության հարցը քննարկման առարկա կարող է դառնալ, եթե 1/3-ը դիմում է ՔՊ ղեկավարին: 24 ստորագրության առկայության դեպքում իշխող խմբակցության պատգամավորները նախարարին հեռացնելու հարցը քննարկում են Նիկոլ Փաշինյանի հետ, այսինքն՝ պատգամավորները հավաքել են նախարարին հեռացնելու հարցը օրակարգ մտցնելու համար անհրաժեշտ ստորագրությունները: Ասել է թե՝ պատգամավորները կատարել են իրենց առջեւ դրված հանձնարարությունը, հիմա գնդակը Փաշինյանի դաշտում է, նա պետք է վերջնական որոշում կայացնի:

ՔՊ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության հարցը վաղուց է ՔՊ-ի օրակարգում եղել, խմբակցության ֆորմատով դժգոհությունները մի քանի անգամ քննարկվել ու մարել են, իսկ հիմնական պատճառն էլ նախարարի եղբոր՝ հետախուզման մեջ գտնվող, Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի գործոնն է եղել:

Ի դեպ, Գրիգոր Մինասյանը հրաժարվում է մեկնաբանել իր շուրջ բարձրացած այս աղմուկը, իսկ արդարադատության նախարարությունից մեկնաբանություն ստանալու համար գրավոր հարցմամբ են պահանջում դիմել:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 223

2018 թվականի հուլիսի 20-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Նախկինում կառավարություններ են եղել, որոնք պետական պարտք են ավելացրել՝ թոշակ բարձրացնելու համար, մենք այդ տրամաբանությամբ չենք առաջնորդվում»:

Մինչդեռ իրականում Հայաստանի պետական պարտքը հատել է 12 մլրդ-ի շեմը:

2021 թվականի փետրվարի 9-ին Ազգային ժողովի ամբիոնից անդրադառնալով ընդդիմադիրների՝ պարտք վերցնելու համար քննադատությանը, Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Բաբկեն Թունյանն ասաց. «Եթե ինչ-որ մեկը մեզ առաջարկում է պարտք չվերցնել, ապա պետք է ցույց տա այն ճանապարհը, թե ինչպես պետք է թոշակ ու աշխատավարձ վճարենք մարդկանց»:

Այսինքն՝ ի հեճուկս Նիկոլ Փաշինյանի հայտարարության, Հայաստանում կենսաթոշակն ու աշխատավարձը վճարվում են պետական պարտքի ավելացման հաշվին: Փաշինյանը նորից խաբեց:

Շարունակությանը կարող եք հետեւել ArmLur.am լրատվականում:

ԿՈՉ Է ԱՐԵԼ ԽՈՒՍԱՓԵԼ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒՑ

Իսրայելի կողմից Լիբանանում իրականացվող ռազմական գործողությունների հետեւանքով տուժածների շրջանում հայեր չկան: Լիբանանի հայաբնակ շրջաններն այս պահին անմիջականորեն վտանգված չեն, ուստի ներկայում տարհանում կազմակերպելու կարիք չկա: Այս մասին նշել է Լիբանանում Հայաստանի դեսպան Վահագն Աթաբեկյանը:

-Պարոն Աթաբեկյան, Լիբանանում վերջին զարգացումների արդյունքում տուժածների շրջանում կա՞ն հայեր կամ ՀՀ քաղաքացիներ:

-Բարեկամ Լիբանանում վերջին մտահոգիչ իրադարձությունների հետեւանքով տուժածների շրջանում հայեր չկան:

Բեյրութում ՀՀ դեսպանությունը մշտական կապի մեջ է տեղի իշխանությունների, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, համայնքային կառույցների հետ՝ ՀՀ քաղաքացիների խնդիրների՝ իր իրավասությունների շրջանակում պատշաճ հասցեագրման նպատակով:

-Կա՞ն տարհանման ծրագրեր:

-Լիբանանի այն բնակավայրերը, որտեղ հիմնականում բնակվում են հայեր, անմիջականորեն վտանգված չեն, ուստի անվտանգության նկատառումով տարհանում իրականացնելու անհրաժեշտություն ներկայում չի նկատվում:

Ընդհանուր առմամբ, Լիբանանում հավատարմագրված որեւէ դեսպանություն մինչ օրս իր քաղաքացիներին չի տարհանել. բոլոր երկրները, որպես կանոն, հորդորում են իրենց քաղաքացիներին լքել երկիրը՝ օգտվելով կոմերցիոն չվերթներից:

Լիբանանում ՀՀ դեսպանությունն աշխատում է արտակարգ ռեժիմի պայմաններում, հյուպատոսական ծառայությունը գործում է ամբողջ ծանրաբեռնվածությամբ՝ սպասարկելու համար ՀՀ քաղաքացիների կարիքները, գործում է ՀՀ ԱԳՆ թեժ գիծը: Դեսպանություն դիմած ՀՀ այն քաղաքացիներին, որոնց անձնագիրը վավեր չէ, վերադարձի վկայական տրվում է անվճար:

Օգտվելով առիթից՝ եւս մեկ անգամ հորդորում ենք ՀՀ քաղաքացիներին ժամանակավորապես խուսափել Լիբանան այցելելություններից, եթե չկա դրա խիստ անհրաժեշտություն:

-Ի՞նչ տեղեկություններ կարող եք տրամադրել լիբանանա-իսրայելական սահմանին տեղակայված ՄԱԿ-ի խաղաղապահների կազմում ՀՀ զորախմբի մասին:

-ՄԱԿ-ի խաղաղապահները, այդ թվում՝ մեր զորախումբը, որոնց հետ դեսպանության եւ ռազմական կցորդի կապը պարբերական է, դուրս են թիրախավորման գոտիներից, եւ իրենց առաքելությունն իրականացնում են ապահով պայմաններում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՀՐԱՎԻՐՎԵԼ

ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը սեպտեմբերի 30-ին հրավիրել է ԵՄ 27 երկրների արտաքին գործերի նախարարների արտակարգ հանդիպում տեսակոնֆերանսի ձեւաչափով՝ քննարկելու Մերձավոր Արեւելքում ստեղծված իրադրությունը:

Bloomberg-ը, վկայակոչելով Բորելի գրասենյակի տարածած հայտարարությունը, հաղորդում է, որ ԱԳ նախարարները կքննարկեն նաեւ Լիբանանում, այդ թվում՝ Բեյրութում Իսրայելի իրականացրած ավիահարվածները, «Հըզբոլլահ»-ի ղեկավար Հասան Նասրալլահի սպանությունը:

ԻՍՐԱՅԵԼ–ԼԻԲԱՆԱՆ. ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

Ասիայում կրքերը չեն հանդարտվում, պատերազմի արկերը չեն դադարում պայթելուց:

Իսրայելի ռազմաօդային ուժերը հարվածներ են հասցրել մի շարք թիրախների Լիբանանի տարբեր շրջաններում, այդ թվում՝ երկրի արեւելքում գտնվող Բեքքայի հովտում: Այս մասին հայտնում է Իսրայելի պաշտպանության բանակի (ԻՊԲ) մամուլի ծառայությունը:

Ըստ Telegram-ում տարածված հայտարարության՝ ռմբակոծվում են Բեքքաայի հովտում շիաների «Հըզբոլլահ» կազմակերպությանը պատկանող օբյեկտները: Իր հերթին Լիբանանի Al Mayadeen հեռուստաալիքը հաղորդել է, որ ավելի քան 10 մարդ է զոհվել Բեքքայի հովտի Հերմել քաղաքում իսրայելական ավիահարվածներից: Ըստ հեռուստաալիքի տվյալների՝ կան մեծ թվով վիրավորներ:

Մեկ այլ հայտարարության համաձայն՝ կործանիչ ինքնաթիռները Լիբանանի տարածքում «Հըզբոլլահ»-ին պատկանող տասնյակ թիրախների են հարվածել, այդ թվում՝ «արձակման կայանքների, որոնց նշանառության տակ էր Իսրայելի տարածքը, շենքերի, որտեղ պահվում էին զենքեր, եւ ահաբեկչական ենթակառուցվածքների»:

Ըստ Լիբանանի իշխանությունների՝ սեպտեմբերի 29-ին իսրայելական ավիահարվածներից առնվազն 105 մարդ է զոհվել: Իսկ ընդհանուր առմամբ, վերջին օրերին զոհերի թիվը գերազանցել է 1000-ը, 6000 մարդ վիրավորվել է: Ըստ Լիբանանի կառավարության՝ տեղահանվել է շուրջ մեկ միլիոն մարդ՝ երկրի բնակչության մեկ հինգերորդը:

«Իսրայելի հարձակումների պատճառով փախստականների թիվը կարող է հասնել 500 հազարի», - ասել է Լիբանանի վարչապետ Նաջիբ Միքաթին:

Լիբանանի տարածքի ռմբակոծությունների մեկնարկից օրեր անց իսրայելցիները բաց տեքստով հայտարարում են՝ օդային հարվածներին հետեւելու է ցամաքային հարձակումը:

Այս մասին նախօրեին, առաջնագիծ կատարած այցի ժամանակ, հայտարարում էր Իսրայելի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հերցի Հալեւին:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ՋՆՋՈՒՄ»

Հոլանդական NOS հանրային հեռարձակողը «Պատմության միտումնավոր ջնջում» խորագրով հոդված է հրապարակել օկուպացված Արցախում Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման մասին:



«Մեկ տարի անց այն բանից հետո, երբ տասնյակ հազարավոր էթնիկ հայեր փախան Լեռնային Ղարաբաղի անկլավից՝ վախենալով էթնիկ զտումներից, նրանց նախկին ներկայության ապացույցները գնալով դառնում են պակաս տեսանելի», - ասվում է հոդվածում:

NOS-ի կողմից հաստատված արբանյակային լուսանկարների համաձայն՝ հիմնովին ավերվել են բազմաթիվ հուշարձաններ, շենքեր, գերեզմանատներ եւ նույնիսկ ամբողջ գյուղեր:

Ուտրեխտի համալսարանի ժառանգության հարցերով պրոֆեսոր Գերջան Պլեցը նշել է, որ պատերազմից հետո ադրբեջանցիները տեղափոխվել են Լեռնային Ղարաբաղ, եւ շինությունները մեկը մյուսի հետեւից քանդվում են: Այս գործընթացը սկսվել է ավելի վաղ՝ 2020 թվականին, երբ Ադրբեջանը վեցշաբաթյա պատերազմից հետո գրավել էր տարածքի մի մասը: Ըստ տվյալների հավաքմամբ զբաղվող ACLED նախագծի՝ 2021 թվականից ի վեր գրանցվել է էթնիկ հայերի պատմական, կրոնական, քաղաքական կառույցների եւ բնակության վայրերի ոչնչացման մոտ ութսուն դեպք: 2023 թվականի սեպտեմբերից այս ցուցանիշը միայն աճել է: Մշակութային ժառանգության այս ոչնչացումը նշանակում է, որ հայկական մշակույթը դանդաղ, բայց անհետանում է այս տարածաշրջանից:

«Մշակութային ժառանգության ավերումը հակառակորդի պատմությունը միտումնավոր ջնջելու միջոց է», - նշել է Պլեցը:

Հոդվածում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում ավերածությունները ոչ միայն երեւում են արբանյակային լուսանկարներով, այլեւ արձանագրվել են ադրբեջանցի զինվորների կողմից: Տեսանյութերից մեկում երեւում է, թե ինչպես են ադրբեջանցի զինվորները մտնում հայկական եկեղեցի եւ ավերածություններ պատճառում:

«Մշակութային ժառանգությունն օգտագործվում է նաեւ հողի իրավունքն օրինականացնելու համար: Այն ոչնչացնելով՝ դուք էթնիկ մի խմբին զրկում եք իրենց պատմական արմատներից այդ վայրում», - հավելել է Պլեցը:

Ինչպես նշում է NOS-ը, քանդելով այս տարածքում դարեր շարունակ կանգուն եղած կառույցները՝ պատմության մի մասը ջնջվում է:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՐՍ–ԳՅՈՒՄՐԻ ԵՐԿԱԹԳԻԾԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՐՊԱՍ ԴԱՌՆԱԼ

Հայկական կողմն ուրախ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման դրական դինամիկայով, սակայն կարծում է, որ շատ ավելին կարելի է անել այդ ուղղությամբ:

Այս մասին ասել է Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը թուրքական Anadolu լրատվական գործակալությանը:

Լրատվական գործակալությունը նշում է, որ Կոստանյանի այս դիրքորոշումը հաջորդում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Նյու Յորքում կայացած հանդիպմանը:

«Մենք ուրախ ենք Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման դրական դինամիկայով, բայց մենք հավատում ենք, որ շատ ավելին կարելի է անել՝ հատկապես, երբ խոսքը հարաբերությունների լիարժեք կարգավորման, սահմանի բացման եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին է»,- ասել է Վահան Կոստանյանը:

Կոստանյանը Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարների հանդիպումը գնահատել է բավականին դրական քայլ՝ նկատելով, որ երկու երկրների ղեկավարները միմյանց դիրքորոշումները հասկանալու պատրաստակամություն են ցուցաբերել:

ԱԳ փոխնախարարը հիշեցրել է երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր ունեցողների համար սահմանի բացման վերաբերյալ պայմանավորվածության մասին, որը ձեռք էր բերվել 2022 թվականի հուլիսին Վիեննայում:

«Մենք եւս մեկ անգամ վերահաստատել ենք, որ հայկական կողմը պատրաստ է: Մենք կատարել ենք անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքային եւ տեխնիկական նախապատրաստական աշխատանքները, եւ մենք պատրաստ ենք անցնել պայմանավորվածության իրականացմանը»,- ասել է հայ փոխնախարարը:

Ըստ Andolu-ի՝ Կոստանյանը լավատեսություն է հայտնել ապագա համագործակցության վերաբերյալ, մասնավորապես Գյումրի-Կարս երկաթուղու վերագործարկման հարցում: Նրա կարծիքով՝ դա տնտեսական օգուտներ կբերի ոչ միայն Հայաստանին եւ Թուրքիային, այլ նաեւ ավելի լայն տարածաշրջանին:

«Մենք գիտենք, որ լոգիստիկ շղթաներից շատերը ներկայումս արգելափակված են կամ պատշաճ չեն գործում, եւ Կարս-Գյումրի երկաթգիծը կարող է նոր դարպաս դառնալ Հայաստանի համար՝ դեպի Եվրոպա, Թուրքիայի համար՝ դեպի Կենտրոնական Ասիա, դեպի Չինաստան», - ասել է նա՝ հավելելով, որ շատ ավելին կարելի է անել, եւ դա կարելի է անել ավելի արագ:

Նա կրկնել է հայկական կողմի ուղերձը, որը փորձում են հասցնել թուրք տարբեր գործընկերներն. «Գործելու ժամանակը հիմա է: Մենք չպետք է ժամանակ կորցնենք»:

ՀՀ–ԻՐԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

«Այս առեւտրի կենտրոնը ամենախոշոր կենտրոնն է աշխարհում եւ սա վկայում է Իրանի եւ Հայաստանի միջեւ եղող բարեկամական խոր հարաբերությունների մասին»: Այս մասին Հայաստանում իրանական առաջին եւ ամենամեծ առեւտրի կենտրոնի բացման ժամանակ ասաց ՀՀ-ում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին:

«Իրանի եւ ՀՀ-ի միջեւ առեւտրաշրջանառության ծավալը թռիչքային աճ են գրանցել, հուսով եմ, որ այս կենտրոնի բացումն էլ ավելի կնպաստի դրան: Վճռական ենք բոլոր ոլորտներում հարաբերությունները զարգացնել»,- ասաց դեսպանը:

Դեսպանը շեշտեց. «Քաղաքական հզոր կամք է առկա 2 երկրների ղեկավարների դեպքում էլ՝ զարգացնելու երկրների միջեւ փոխգործակցությունը բոլոր ոլորտներում»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀՐԿԻԶՄԱՆ ԴԵՊՔՈՎ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է 23-ԱՄՅԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ

2024թ. սեպտեմբերի 24-ին Երեւան քաղաքի բնակչուհին հաղորդում է տվել այն մասին, որ ժամը 01:00-ի սահմաններում տեսել է, որ իր բնակության վայր հանդիսացող Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտա 46 հասցեի բակային հատվածում կայանված իրեն պատկանող Honda Kona մակնիշի եւ հարեւանությամբ կայանված Opel եւ BMW մակնիշի ավտոմեքենաներն այրվում են:

Հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 6-րդ կետերի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում վնասված ավտոմեքենաների սեփականատերերը տուժող են ճանաչվել եւ հարցաքննվել:

Նախաքննության ընթացքում զննության են ենթարկվել դեպքի վայր հանդիսացող ավտոկայանատեղին եւ այրված ավտոմեքենաները, առգրավվել են դեպքի վայրի հարակից տարածքում տեղադրված տեսանկարահանող սարքերի տեսագրությունները եւ ենթարկվել զննության:

Քրեական վարույթով էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով՝ նշանակվել է դատահրդեհատեխնիկական, դատահետքաբանական եւ դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն:

Ձեռնարկված ապացուցողական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով 23-ամյա երիտասարդ է:

Վերջինս ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցների կողմից ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, ձերբակալվել է եւ հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ՝ հայտնելով, որ արարքը կատարել է սոցիալական ցանցում այլ անձանց հետ հաղորդակցությունից ստացած տպավորությունների ազդեցությամբ:

Քննությամբ պարզվել է, որ դեպքի օրը՝ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, երիտասարդն իր հետ նախապես վերցրած բենզինը լցրել է Honda Kona մակնիշի ավտոմեքենայի վրա եւ հրկիզել այն, որի հետեւանքով այդտեղ կայանված այլ անձանց պատկանող Opel եւ BMW X6 մեքենաները նույնպես այրվել են՝ ավտոմեքենաների սեփականատերերին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 264- րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 6-րդ կետերով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հրկիզմանն այլ անձանց հնարավոր առնչությունը պարզելու ուղղությամբ:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔՐԳՈՐԾ՝ 9-ԱՄՅԱ ԱՂՋԿԱ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՎ

Օրերս Արարատի մարզի Վեդու թիվ 2 միջնակարգ դպրոցում վնասվածքներ ստացած 9-ամյա աղջիկը երեկ մահացել է: Այս մասին տեղեկացնում են Արարատի մարզպետի աշխատակազմից:

«Գործի առիթով արդեն հարուցվել է քրեական գործ: Արարատի մարզպետի աշխատակազմի պատասխանատու պաշտոնյաները դեպքից անմիջապես հետո եղել են դպրոցում, այնուհետեւ հիվանդանոցում, հանդիպել աշակերտի ծնողների հետ, ամենօրյա ռեժիմով ծանոթացել աղջկա առողջական վիճակին:

Մարզպետի աշխատակազմի կողմից լիազորությունների սահմանում ամեն բան արվելու է քրգործին աջակցելու եւ ուսումնական հաստատություններում անվտանգության նորմերն առավել խստացնելու ուղղությամբ», - ասված է հաղորդագրության մեջ:

ԿԵՂԾԻՔՈՎ ՈՐԴՈՒՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԱՋԱՏԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով հիմնավորվել է, որ Կ. Չ.-ն, զբաղեցնելով Տավուշի մարզի համայնքներից մեկի վարչական ղեկավարի պաշտոնը եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, կատարել է պաշտոնեական կեղծիք: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ Կ. Չ.-ն 2024 թվականի փետրվարին համայնքապետարան է ներկայացրել իր ստորագրությամբ վավերացված՝ Տավուշի մարզի բնակավայրերից մեկի 20-ից 51 տարեկան բնակիչներ հանդիսացող ՀՀ զինապարտ քաղաքացիների անվանացուցակ, որի մեջ եղել են նաեւ իր որդու տվյալները: Կ. Չ.-ն, սակայն, մտադրված լինելով ազատել որդուն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվող 25-օրյա վարժական հավաքներից, կեղծ նշում է կատարել վերջինիս՝ Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու մասին այն դեպքում, երբ որդին այդ պահին գտնվել է Հայաստանի Հանրապետությունում: Այնուհետեւ ակնհայտ կեղծ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթը Կ. Չ.-ն ուղարկել է համայնքապետարան, որից հետո այն դրվել է պաշտոնական շրջանառության մեջ: Վերը նշված հանցավոր արարքի համար Կ. Չ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԸՆԹԱՑԻԿ

ԵՐԵԽԱՅԻ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԱԾԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ երեխայի առեւանգման փորձ կատարած տղամարդը կալանավորվել է:

Հիշեցնենք, որ ավելի վաղ գրել էինք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ օրերս երեխային առեւանգել փորձող տղամարդը ձերբակալված է:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ նա մոտեցել է երեխաներին, ասել է՝ եկեք ձեզ տանեմ, բայց երեխաները չեն գնացել:

Առեւանգման փորձով կա ձերբակալված մեկ տղամարդ, ենթադրվում է, որ նա համացանցում տարածված լուսանկարի տղամարդն է: Կատարվում է քննություն:

Հիշեցնենք, որ արդեն մի քանի օր է, ինչ լուրեր են տարածվել, թե միջին տարիքի տղամարդը մոտենում է երեխաներին եւ համոզելով՝ փորձում նստեցնել իր մեքենան: Դպրոցներում տագնապային իրավիճակ է, տնօրենների զգուշացվել է ուշադիր լինել, իսկ ծնողներին հորդորվել, որ անձամբ գան եւ երեխաներին տուն տանեն:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն տեղակացրել էր, որ 2024 թվականի փետրվարի 24-ին ստացվել է համատիրության նախագահ Կ. Զ.-ի հաղորդումն այն մասին, որ ժամը 17:00-ի սահմաններում Պ. Սեւակ փողոցի 8/1 շենքի բակում դիտողություն է արել Պ. Սեւակ փողոցի 8 շենքի մի բնակչի, եւ առաջացած վիճաբանության ժամանակ այդ բնակչի եղբայրն իր մոտ եղած գազային ատրճանակով կրակել է իր ուղղությամբ, ապա դանակով հարվածել է իր ձախ ուսին՝ պատճառելով վնասվածք: Դրանից հետո ինքը, ինքնապաշտպանության նպատակով, իրեն պատկանող գազային ատրճանակով կրակել է օդ:

Հաջորդ օրը ստացվել Ա. Ա.-ի հաղորդումն այն մասին, որ Պ. Սեւակ փողոցի 8/1 հասցեի դիմաց իր եղբոր որդիներ Խ. եւ Տ. Ա.-երի հետ, վիճաբանել են համատիրության նախագահ Կ.Զ.-ի հետ, որի ընթացքում վերջինս մի քանի անգամ հարվածներ է հասցրել իր դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածք, բացի այդ իր մոտ եղած ատրճանակը պահել է իր վրա:

Ձեռք բերված բավարար փաստերի համակցության հիման վրա՝ Կ. Զ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 27-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 194 դեպք՝ որից 1-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ 2021 Թ.-ԻՑ ԿԻՍԱՏ Է ՄՆԱՑԵԼ

Սեպտեմբերի 29-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Վարագա Սուրբ Խաչի տոնը, այդ օրը նաեւ Նոր Վարագավանքի ուխտի օրն էր, Նոր Վարագավանքում մատուցվեց պատարագ: Տավուշի մարզի Բերդ համայնքի Վարագավան գյուղի վարչական տարածքում գտնվող Նոր Վարագավանքը նշանավոր հոգեւոր կոթող է, այն 1193-1198 թվականներին հիմնել է Դավիթ Բ Կյուրիկյան թագավորը, հետագայում՝1234-1237 թթ. նրա թոռը՝ Վասակ Բ-ն, վանական համալիրն ընդարձակել է: Մոնղոլների կողմից Վարագավանքն ավերելուց հետո Վարագավանքի հոգեւոր առաջնորդ Ղուկասը 1213թ. այստեղ է տեղափոխել Վարագավանքի հոգեւոր մասունքները, այդ թվում՝ Սուրբ Խաչափայտի կտորը, որը բերել էին Հռիփսիմյան կույսերը: Ամեն տարի սեպտեմբերի վերջին Նոր Վարգավանքում Վարագա Սուրբ Խաչի տոնն է. Սուրբ Էջմիածնից այստեղ է տեղափոխվում Քրիստոսի Խաչափայտի մասունքը՝ հավատացյալների երկրպագության համար, մատուցվում է տոնական պատարագ: Վարագավանքում մշտապես հոգեւոր ծառայություն իրականացնող քահա չկա, սակայն այնտեղ հաճախ հոգեւոր արարողություններ՝ կնունքներ, պսակադրություններ են կատարվում, շատ հավատացյալներ, զբոսաշրջիկներ են գալիս Բերդի տարածաշրջանից, Հայաստանի տարբեր վայրերից, արտասահմանյան երկրներից: Վանական համալիր տանող ճանապարհը ասֆալտապատ է, ինչը դյուրացնում է Նոր Վարագավանք մարդկանց հոսքը: Վանական համալիրը գտնվում է ՀՀ մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության ընկերության հաշվեկշռում:

2012թ. ապրիլի 26-ին Տավուշի մարզ այցելության ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը եղել է Նոր Վարագավանքում, քննարկել դրա վերանորոգման հարցը: 2012թ. սկսվեց վանական համալիրի նորոգումը: Այն կատարվեց «Իդեալ համակարգի» սեփականատեր Նորայր Խաչատրյանի եւ Ռաֆիկ Մանուչարյանի միջոցներով: Ռաֆիկ Մանուչարյանը «Իդեալ համակարգի» սեփականատեր Նորայր Խաչատրյանի բարեկամն է: Նորայր Խաչատրյանը կորոնավիրուսից մահացել է, 2021թվականից Նոր Վարագավանքի նորոգումը կիսատ է մնացել: Բերդի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Արամ քահանա Միրզոյանից տեղեկացանք, որ բարեգործներ Նորայր Խաչատրյանի եւ Ռաֆիկ Մանուչարյանի ֆինանսական միջոցներով վերանորոգվել են վանական համալիրի Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Նշան եկեղեցիները, մնացել է գավթի նորոգումը եւ վանական համալիրի տարածքի բարեկարգումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՐԱՖԱՆՔԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՍԹ» ԲՐԵՆԴԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

Ս.թ. սեպտեմբերի 20-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել «Ֆասթ» բրենդի կայացման եւ զարգացման 30-ամյակին նվիրված միջոցառում:



Հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի, գործընկերներ կազմակերպությունների ներկայացուցիչներ, «Ֆասթի» աշխատակիցներ եւ այլ հյուրեր: «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի խորհրդի նախագահ, «Ֆասթ բանկ»-ի խորհրդի նախագահ Վահե Բադալյանը ներկայացրել է ընկերության հիմնադրման պատմությունը.

«Նախ ուզում եմ նշել, որ «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խումբը հիմնադրվել է հորս՝ Ռոմիկ Բադալյանի, իմ, եւ եղբորս՝ Վիգեն Բադալյանի կողմից 1989թ.-ին: Մեր բոլոր հաջողությունները մեր երեքի հավասար ու փոխլրացնող աշխատանքի արդյունքն են: Երեսուն տարվա հետեւողական ու նվիրված աշխատանքի արդյունքում՝ այսօր հնարավորություն ունենք ձեզ հետ միասին նշելու «Ֆասթ»-ի երեսունամյակը»:

Վահե Բադալյանը խոսել է նաեւ «Ֆասթի» գործունեության երեսուն տարվա կարեւոր ձեռքբերումներից եւ հաջողություններից՝ընդգծելով, որ «Ֆասթ բանկը» շարունակում է մասնաճյուղերի քանակի ընդլայնումը, մեծացնում վարկային պորտֆելը, բարելավում սպասարկման որակը եւ կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ հետեւողական աշխատանք տանում՝ ամրապնդելով իր տեղը Հայաստանի լավագույն բանկերի շարքում:

«Ֆասթ բանկի մասնաճյուղերի ընդհանուր քանակն արդեն հասել է 34-ի, եւ եւս 8-ը գտնվում են շինարարության փուլում, այսօր «Ֆասթը» 10 մասնաճյուղ ունի Անգլիայում, եւ եւս 4-ը կավելանան տարեվերջին: Շուտով կստանանք լիցենզիա եւ արդեն կլինենք նաեւ Հնդկաստանում: Մեկ անգամ չէ, որ նշել եմ, մեր կարեւորագույն նպատակը՝ «Ֆասթ բանկը» դարձնել համաշխարհային հայկական գլոբալ բանկ, որը ներկայացված կլինի աշխարհի տասնյակ երկրներում: Առաջնորդվելով այդ գաղափարի իրագործմամբ՝ մենք անում ենք հնարավորը, որպեսզի այն իրականություն դարձնենք», - նշել է Վահե Բադալյանը:

Հավելենք նաեւ, որ այս տարվա առաջին 6 ամսվա տվյալներով «Ֆասթ բանկը» Հայաստանի 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում զբաղեցնում է 56-րդ հորիզոնականը՝ վճարելով 2.76 մլրդ դրամ: Այս տարվա ութամսվա ընթացքում «Ֆասթ բանկը» գրանցել է հետեւյալ հաջողությունները.

Բանկի ակտիվներն աճել են 81 մլրդ դրամով՝ հասնելով 198.2 մլրդ-ի. աճը՝69%:

Վարկային պորտֆելն աճել է 62 մլրդ դրամով՝ հասնելով 154 մլրդ դրամի, աճը՝ 67 %:

Պարտավորություններն աճել են 68 մլրդ դրամով՝ կազմելով շուրջ 131 մլրդ դրամ, աճը՝108%:

Ավանդային պորտֆելն աճել է 54 մլրդ դրամով՝ հասնելով 89 մլրդ-ի, աճը՝154 % :

Կանոնադրական կապիտալը բաժնետերերի կողմից համալրվել է 10 մլրդ դրամով, իսկ սեփական կապիտալն աճել է 14 մլրդ դրամի չափով եւ այն այժմ 68 մլրդ դրամ է:

Թվարկված առաջին 4 ցուցանիշների աճի տեմպով «Ֆասթ բանկը» շուկայի առաջին տեղում է:

Միջոցառման ընթացքում հայտարարվել է, որ հոկտեմբերի 1-ից «Ֆասթ բանկն» սկսում է բանկային՝ «Ակն» քարտերի տրամադրումը: Քարտերի արտաքին տեսքի հիմքում մեծ գաղափար է ներդրվել մարդկային աչքի կիրառմաբ, որն, ինչպես ընդունված է ասել՝ մարդու հոգու հայելին է:

«Ֆասթ» բրենդն իր 30-ամյա գործունեության ընթացքում մշտապես մեծ ուշադրություն է դարձրել բարեգործությանը: «Ֆասթ բանկը», որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, տեղյակ լինելով Հայաստանի մշակութային ոլորտի առկա խնդիրներից, շարունակաբար աջակցել է դրանց լուծմանը:

Միջոցառման մեկնարկը վստահվել էր աշխարհահռչակ դաշնակահար եւ կոմպոզիտոր Տիգրան Համասյանին, իսկ այն եզրափակվել է հատուկ անակնկալով. ներկաները վայելել են հոլանդացի հանրահայտ երգչուհի Կովաչի եւ նրա նվագախմբի բացառիկ կատարումները:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՉ ԱՐԺԵՆ ԵՐԵՎԱՆ-ՄՈՍԿՎԱ ԱՎԻԱՏՈՄՄԵՐԸ

Արդեն աշնան երկրորդ ամիս ենք տեղափոխվում:

Աշնանը ճամփորդությունները ավելի քիչ են լինում համեմատած ամռանը, սակայն կան մարդիկ, ովքեր նախընտրում են գնալ այլ երկիր հենց այս եղանակին:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է, թե ինչ արժեն Երեւան-Մոսկվա չվերթները աշնան երկրորդ ամսին՝ հոկտեմբերի 1-ից 5-ը ընկած ժամանակահատվածում:

Այսպիսով՝ հոկտեմբերի 1-ին FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքի արժեքը 59,500 դրամ է:

Azimuth ավիաընկերությունում 3 ժամ 30 րոպե ուղիղ թռիչքը 60,840 դրամ է, իսկ Armenian AirLines 3 ժամ 25 րոպե թռիչքը՝ 66,370 դրամ:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 2-ին, FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքը 59, 500դրամ է, SuperKassa-ում 21 ժամ ոչ ուղիղ թռիչքը 82,000 դրամ է:

Նույն FlyOne-ում 3 ժամ թռիչքի արժեքը 92,560 դրամ է: Հոկտեմբերի 3-ին՝ հինգշաբթի, Agent.ru-ում 3 ժամ 50 րոպե ուղիղ թռիչքը արժե 59,200 դրամ:

Azimuth ավիաընկերությունում 3 ժամ 30 րոպե ուղիղ թռիչքը 60,840 դրամ է, տվյալ ընկերությունը առաջարկում է նաեւ 14 ժամ 15 րոպե տեւողությամբ թռիչք, որի արժեքը 79,240 դրամ է:

Հոկտեմբերի չորսին FlyOne ավիաընկերությունում երեք ժամ թռիչքի արժեքը փոխվում է՝ դառնալով 72,720 դրամ: Նույնը նաեւ SuperKassa-ում է, 17 ժամ ոչ ուղիղ թռիչքի արժեքը 83,050 դրամ է:

Հոկտեմբերի 5-ին ավիատոմսերի արժեքը էապես չի փոխվում եւ տատանվում է 59,000-ից մինչեւ 90,000 դրամ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՆՉՊԻՍԻՆ Է ՎԱՐԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ վիճակագրական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հիվանդությունների բացարձակ եւ հարաբերական ցուցանիշների մասին՝ 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին: Այսպիսով, այս տարվա առաջին 7 ամիսներին արձանագրվել է քութեշով վարակման 2 հազար 583 դեպք:

Հիշեցնենք, որ տարեսկզբին կարմրուկը եւ քութեշը վարակի ռեկորդային ցուցանիշ էին ապահովել, ինչը նկատելի է նշված վիճակագրությունում:

Նույն ժամանակահատվածում արձանագրվել է ջրծաղիկի 16 հազար 193 դեպք: Հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է կարմրուկի 512 դեպք, վիրուսային թոքաբորբի 140 դեպք:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 37 պատահար. 2 մարդ զոհվել է, 52-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԹՎԵՐ

Ո՞Ր ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԵՆ ՀՀ-ՈՒՄ ԳՈՒՅՔ ՎԱՃԱՌԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը Վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե օտարերկրյա քաղաքացիների կողմից քանի՞ անշարժ գույքի գործարքներ են եղել ՀՀ-ում 2024 թվականի հուլիս ամսին՝ ըստ գույքի տեսակների եւ երկրների ու տարածաշրջանների:

Ներկայացնում ենք, թե որ երկրների քաղաքացիներն են ՀՀ-ում անշարժ գույք վաճառել:

Այսպիսով՝ ցանկի առաջին հորիզոնականում ՌԴ-ն է:

Ռուսաստանի Դաշնության 188 քաղաքացի վաճառել է բազմաբնակարան շենքի 70 բնակարան, 40 բնակելի տուն, արտադրական նշանակության 1 շինություն, հասարակական նշանակության 1 շինություն, 4 ավտոտնակ, 72 հողատարածք, որից 33-ը գյուղատնտեսական նշանակության:

ԱՄՆ-ի 15 քաղաքացի ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 5 բնակարան, 3 բնակելի տուն, հասարակական նշանակության 2 շինություն եւ 4 հողատարածք:

Համեմատելով ՌԴ քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքի հետ՝նկատելի է, որ ԱՄՆ-ի քաղաքացիները զգալիորեն քիչ են վաճառք իրականացրել:

Իրանի Իսլամական Հանրապետության 3 քաղաքացի ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 1 բնակարան, 1 ավտոտնակ եւ 1 հողատարածք:

Սիրիայի 1 քաղաքացի ՀՀ-ում վաճառել է ընդամենը 1 բնակելի տուն:

Եվրոպական պետությունների 27 քաղաքացի ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 13 բնակարան, բնակելի 5 տուն, 1 ավտոտնակ, 8 հողատարածք, որից 2-ը՝ գյուղատնտեսական նշանակության:

ԱՊՀ պետությունների 15 քաղաքացի, բացի ՌԴ-ից, ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 5 բնակարան, բնակելի 4 տուն, 6 հողատարածք, որից 1-ը՝ գյուղատնտեսական նշանակության:

Այլ պետությունների 4 քաղաքացի ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 1 բնակարան եւ 3 հողատարածք, որից 1-ը՝ գյուղատնտեսական նշանակության:

Ընդհանուր 253 օտարերկրյա քաղաքացի ՀՀ-ում վաճառել է բազմաբնակարան շենքի 95 բնակարան, բնակելի 53 տուն, արտադրական նշանակության 1 շինություն, հասարակական նշանակության 3 շինություն, 7 ավտոտնակ, 94 հողատարածք, որից 37-ը՝ գյուղատնտեսական նշանակության:

Ամփոփելով վիճակագրությունը՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիներից անշարժ գույք ամենաշատը վաճառածները ՌԴ-ի քաղաքացիներն են:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ

Հեղինակավոր The Financial Times պարբերականի ներքո գտնվող https://www.thebanker.com/ կայքի «Երբ բանկային գործունեությունը փոփոխությունների առաջնագծում է» հոդվածում ներկայացվում է բանկի զարգացման ռազմավարական ուղղությունների, միջազգային լայն համագործակցությունների, տեխնոլոգիական նոր լուծումների ներդրման մասին:

Բանկի Խորհրդի նախագահ Սարիբեկ Սուքիասյանը անդրադառնում է սոցիալական վերափոխման աջակցության, բանկի ավելի քան 33 տարվա գործունեության եւ զարգացման գործոններին:

Հոդվածը The Banker-ի կայքում

Ստորեւ հայերեն թարգմանությունը՝ կրճատումներով.

Ո՞րն է բանկի դերը: Վարկավորու՞մ, ֆինանսավորու՞մ, հաշվի վարու՞մ: Թե՞ այն կարող է նաեւ լինել ուժ այս անկայուն աշխարհում դրական փոփոխությունների համար:

Կենտրոնական Ասիայի սրտում՝ Սեւ ծովի եւ Կասպից ծովերի միջեւ գտնվող ցամաքով օղակված Հայաստանը մի երկիր է, որտեղ փոփոխությունները նկատելի են, եւ ֆինանսական հաստատություններն այդ փոփոխության մի մասն են կազմում:

Ընդամենը երեք տասնամյակ առաջ Հայաստանը դեռեւս ուներ կենտրոնացված կառավարվող տնտեսություն եւ բանկային սեկտոր: Այսօր դա արդեն հեռավոր անցյալի մաս է թվում: 1991-ին Հայաստանի անկախացումից ի վեր եւ, մասնավորապես, 2018-ի Թավշյա հեղափոխությունից հետո, որը հեռացրեց նախկին իշխանությանը եւ մնացած պետական վերահսկողության համակարգը, Հայաստանի տնտեսությունը սկսեց արագորեն աճել իր ծավալով եւ բարդությամբ:

Այդուհանդերձ, Հայաստանի նման երկրի տնտեսությունները չեն կարող կատարել նման անցումը առանց ինստիտուտների ակտիվ մասնակցության, այդ թվում՝ բանկերի:

Ըստ Սարիբեկ Սուքիասյանի, ով ազատականացման վերջին ժամանակաշրջանում նոր թափ ստացած խոշոր ֆինանսական հաստատություններից մեկի՝ «Հայէկոնոմբանկի» Խորհրդի նախագահն է, Հայաստանի տնտեսության արդիականացումը բանկի համար եղել է հնարավորությունների, բայց նաեւ շատ առանձնահատուկ մարտահրավերների շրջան:

Աջակցություն սոցիալական վերափոխմանը

«Թավշյա հեղափոխությունը, ըստ էության, ազատականացրեց մտածելակերպերը»,- ասում է Սարիբեկ Սուքիասյանը:

«Այն փոխեց ապրելակերպը, փոխեց աշխարհայացքները: Մենք այլեւս կաշկանդված չենք օլիգարխիկ մենաշնորհներով. մենք ազատ ենք՝ արժեքներ ստեղծելու համար: Սակայն փոփոխություններն առաջ բերեցին նաեւ իրական մարտահրավերներ՝ մարդկային ռեսուրսների, հմտությունների, գիտելիքների եւ վարչարարական փորձի սակավությամբ պայմանավորված: Ես ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված չեմ քաղաքականության մեջ, բայց, որպես բանկ, մենք դեռեւս դերակատարություն ունենք այդ մարտահրավերներին դիմակայելու գործում»:

Ներդրում ապագայի մեջ

Հայաստանի կառավարությունը մասնավոր բանկերի կողմից նման նպատակային զարգացման վարկավորումը դիտարկում է որպես տնտեսության արդիականացման կարեւոր մաս եւ աջակցում է բանկերին՝ առանցքային ոլորտներում վարկերի սուբսիդավորմամբ: Վերջին դեպքերից մեկում «Հայէկոնոմբանկը» «Կանայք բիզնեսում» ծրագրի շրջանակում եւ կառավարության՝ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության ծրագրի հետ համատեղությամբ, սուբսիդավորված տոկոսադրույքով վարկ է տրամադրել գյուղատնտեսական փոքր արտադրողի՝ հնարավորություն տալով ներդրում կատարել մշակության նոր տեխնոլոգիաներում՝ թույլ տալով ֆերմերին դառնալ սերտիֆիկացված օրգանական մթերքի արտադրող եւ արտահանել արտադրանքը Հայաստանից դուրս՝ այլ երկրներ՝ներառյալ ԵՄ:

Բանկը նաեւ աշխատում է միջազգային կառույցների հետ, որոնց շարքում են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը եւ Ասիական զարգացման բանկը: Դա ներառում է փոքր եւ միջին բիզնեսի վարկավորում եւ ավանդական ուղղություններից բացի նաեւ կանաչ ծրագրերի ֆինանսավորում, նոր տեխնոլոգիաների որդեգրում՝ ուղղված բնապահպանական հրատապ խնդիրների մեղմմանը:

Արժեքներին առաջնահերթության տրամադրում

Այս տարի «Հայէկոնոմբանկը» նշում է իր գործունեության 33 տարին: Սարիբեկ Սուքիասյանի խոսքով՝ բանկի անկախ մնալու եւ զարգանալու գործոններից մեկն այն է, որ այն միշտ չէ, որ մաքուր բիզնես շահերը գերադասում է Հայաստանի հասարակության շահերից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿԸ» ԿԱՄՓՈՓԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերին հայտնի կդառնա «Յունիբանկի» եւ Visa-ի համատեղ արշավի գլխավոր մրցանակի հաղթողը: Արշավին մասնակցում են այս տարվա հուլիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը յուրաքանչյուր ամիս «Յունիբանկի» քարտերով արտասահմանյան բանկերի կողմից թողարկված Visa քարտերին դրամական փոխանցումներ կատարած հաճախորդները:

Արտասահմանյան Visa քարտերին ամսական 100 ԱՄՆ դոլար կամ եվրո եւ ավելի գումարի փոխանցումներ կատարած քարտապանների միջեւ յուրաքանչյուր ամիս բանկը խաղարկում էր արժեքավոր նվերներ: Իսկ արշավի ընթացքում 1 000 ԱՄՆ դոլար կամ եվրո եւ ավելի գումարի Visa Direct փոխանցումներ կատարած քարտապանների միջեւ կխաղարկվի գլխավոր մրցանակը՝ 7-օրյա ուղեւորություն Թունիս երկու անձի համար:

Արտերկիր՝ անմիջապես Visa քարտերին փոխանցումներ կարելի է կատարել «Յունիբանկի» մոբայլ հավելվածում՝ UNIMobile-ում: Փոխանցումը կատարելու համար անհրաժեշտ է նշել միայն ստացողի անուն-ազգանունը եւ քարտի համարը:

ԻՆՉ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՈՐՔԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԵՐՄՈՒԾԵԼ

Պետական եկամուտների կոմիտեն հիշեցնում է առանց մաքսատուրքերի հարկերի վճարման տեղափոխման ենթակա ապրանքների թույլատրելի չափաքանակների մասին: Օդային ճանապարհով Հայաստան ժամանելիս ֆիզիկական անձինք, առանց մաքսային վճարների, ուղեկցող եւ (կամ) չուղեկցող ուղեբեռով կարող են տեղափոխել անձնական օգտագործման ապրանքներ, որոնց քաշը չի գերազանցում 50 կգ, արժեքը՝ 10 000 եվրոյին համարժեք դրամը, իսկ ցամաքային ճանապարհով ժամանելիս՝ 10 կգ եւ 200 եվրոյին համարժեք դրամը:

Ֆիզիկական անձի կողմից առանց մաքսային վճարների ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի նորմերում չեն ներառվում ճամփորդության ընթացքում եւ (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքները: Իսկ անձնական օգտագործման ապրանքները՝որպես այդպիսիք, դիտարկում են մաքսային մարմինները՝ հաշվի առնելով՝ սեզոնայնությունը, ուղեւորության նպատակը, ֆիզիկական անձի կողմից սահմանը հատելու հաճախականությունը, ինչպես նաեւ ապրանքի մաշվածությունը, պիտակների բացակայությունը, ներմուծվող ապրանքների քանակը եւ այլն:

Առանց մաքսային վճարների օդային եւ ցամաքային տրանսպորտով, ներառյալ՝ հետիոտն ճանապարհով, տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի չափաքանակները գերազանցելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել ուղեւորային մաքսային հայտարարագիր եւ վճարել մաքսային վճարներ գերազանցող մասի համար՝ արժեքից 30%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1 կգ-ի դիմաց՝ 4 եվրոյին համարժեք դրամը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈՒՇԱԿՈԹՈՂ

ԲԱՑՎԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՔԱՆԴԱԿ

Երեկ տեղի ունեցավ Ավրորա Մարդիգանյանին եւ Հայոց ցեղասպանության նահատակներին նվիրված հուշակոթող-քանդակի բացման արարողությունը Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հարակից այգում: Այն նախաձեռնել եւ իրագործել է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը: Բացման արարողությանը հաջորդեց մրցանակի արժանացած «Ավրորայի լուսաբացը» անիմացիոն վավերագրական ֆիլմի հատուկ ցուցադրությունը, որը պատմում է Մարդիգանյանի՝ դեռի մեծ էկրան արտասովոր ճանապարհի մասին:

Ավրորա Մարդիգանյանը երիտասարդ աղջիկ էր, որն, անցնելով Հայոց ցեղասպանության սարսափների միջով՝ կարողացավ նոր կյանք սկսել Ամերիկայում: Նա դարձավ համր կինոյի դարաշրջանի հոլիվուդյան աստղ եւ բարերար: Նրա պատմությունը խորապես հուզել էր Նուբար Աֆեյանին, Վարդան Գրեգորյանին եւ Ռուբեն Վարդանյանին, որոնք 2015 թ. որոշեցին ի պատիվ նրա անվանակոչել «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը, որն ստեղծվեց՝ Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից եւ ի երախտագիտություն նրանց փրկողների:

Հուշակոթող-քանդակը հարգանքի տուրք է նաեւ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած 1.5 միլիոն սրբադասված նահատակներին: Հուշարձանին ի պահ է տրված Ավրորա Մարդիգանյանի՝ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում գտնվող ընդհանուր գերեզմանից վերցված հող եւ Դեր Զորի անապատի զոհերի մասունք՝ բերված Լիբանանի Անթիլիաս քաղաքից:

«Որպես հայ՝ ինձ համար մեծ նշանակություն ունի այս հուշակոթող-քանդակը: Այն արտահայտում է մեր երախտագիտությունն Ավրորա Մարդիգանյանին եւ մեր ուրախությունը, որ նա վերջապես տուն վերադարձավ»,- ասաց թատերագետ եւ երգահան Մարինե Ալեսը, որը՝ որպես «Ավրորայի» Ստեղծագործական խորհրդի նախագահ, իր առաջնորդությամբ եւ տեսլականով օգնել է կյանքի կոչել այս գաղափարը: «Հուշակոթող-քանդակը նաեւ մեր հարատեւ հիշողության եւ հարգանքի խորհրդանիշն է: Ես խորապես հավատում եմ, որ մենք պատասխանատվություն ունենք հաջորդ սերնդի առաջ՝ փոխանցելու նրանց համամարդկային արժեքներ, հատկապես այսօր, երբ աշխարհը կանգնած է մեծագույն մարտահրավերների առաջ»:

Երկկողմանի հուշակոթող-քանդակի հեղինակն իտալահայ քանդակագործ Վիգեն Ավետիսն է: Այն արտացոլում է Ավրորա Մարդիգանյանի կյանքը՝ նրա անցած ճանապարհը Ցեղասպանության վայրագությունների միջով եւ փրկությունն ԱՄՆ-ում: Քանդակի մի կողմում պատկերված են կանայք, որոնք տառապում են Դեր Զորի անապատի ճանապարհներին. նրանց թվում է երիտասարդ Ավրորան: Քանդակի ճակատային մասում նա առանձնանում է՝ որպես կին, որը հաղթեց մահն ու իր պատմությունը պատմեց աշխարհին՝ սերունդների համար դառնալով խիզախումի եւ վերապրումի մարմնացում: Քանդակի երկու կողմերը միաձույլ չեն. դրանց միջեւ հեռավորությունը թույլ է տալիս, որ լույսի եւ ստվերի միջոցով միահյուսվեն Ավրորայի կյանքի երկու փուլերը:

Ի թիվս այլ հարգարժան հյուրերի՝ բացման արարողությանը ներկա էին Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, «Ավրորայի» համահիմնադիր Նուբար Աֆեյանը, UWC Դիլիջան միջազգային դպրոցի հիմնադիր գործընկեր եւ Կառավարիչների խորհրդի նախագահ Վերոնիկա Զոնաբենդը, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության Խորհրդի անդամներ Աննա Աֆեյանը, Էրիկ Էսրայիլյանն ու Արման Ջիլավյանը, Երեւանի քաղաքապետարանի, Կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչներ:

Հուշակոթող-քանդակը հանդիսավոր բացեցին Վերոնիկա Զոնաբենդը եւ Աննա Աֆեյանը՝ միանալով «Ավրորայի»՝ մարդասիրության եւ երախտագիտության կոչին: Միջոցառմանը ելույթ ունեցավ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախումբը՝ Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ, որը ներկաներին հուզեց հայկական ստեղծագործությունների տպավորիչ կատարումներով:

Հատուկ այս առիթով Մատենադարանից դուրս է բերվել XXI դարում այնտեղ ստեղծված առաջին՝ «Մատյան մարդասիրաց» ձեռագիրը: Ցուցադրության ներկայացվեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության պատմությանն ու գործունեությանը նվիրված այս յուրօրինակ ձեռագրի վերջին էջը՝ նորաբաց հուշակոթող-քանդակի պատկերով: «Մատյան մարդասիրաց» ձեռագիրը կցուցադրվի Կոմիտասի թանգարան-ինստիտուտում մինչեւ 2024 թ. հոկտեմբերի 7-ը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՔՈՒՅՐ ԴՊՐՈՑՆԵՐ»

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԾՐԱԳՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ այսօր՝ հոկտեմբերի 1-ին, մեկնարկում է Երեւանի եւ մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի աշնանային շրջափուլը:

Երեւանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցի նախաձեռնությամբ իրականացվող ծրագիրը 5 տարիների ընթացքում իր շուրջն է համախմբել հանրապետության ավելի քան 60 երաժշտական եւ արվեստի դպրոցների շուրջ 3000 սովորողների եւ մանկավարժների:

Մշակութային ապակենտրոնացման եւ տարածքային համաչափ զարգացման, արտադպրոցական ուսուցում իրականացնող հաստատությունների միջեւ կապեր ստեղծելու, ինչպես նաեւ համատեղ աշխատանքի եւ փորձի փոխանակման հարթակ տրամադրող ծրագրի աշնանային շրջափուլի մեկնարկը կտրվի Վանաձորում: Երեւանի Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոցի պատվիրակությունը կհյուրընկալվի Է. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում:

Համատեղ համերգային ծրագրից բացի՝ Երեւանից ժամանած մասնագետները Վանաձորի երաժշտական եւ արվեստի դպրոցների սաների համար կիրականացնեն վարպետության դասեր, որից հետո Վանաձորի կերպարվեստի թանգարանում կկազմակերպվի ճանաչողական այցելություն Երեւանից ժամանած երեխաների համար:

Երեւանի եւ ՀՀ մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի աշնանային շրջափուլի շրջանակում նախատեսված է 10 փոխայցելություն, որին կմասնակցեն Երեւանի եւ Հայաստանի բոլոր մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների շուրջ 250 սովորողներ եւ մանկավարժներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹՈՒՐՔ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ՀԱՅ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՎՐԱ ԵՆ ՀԱՐՁԱԿՎԵԼ

Թուրք երկրպագուները Ֆրանսիայում հարձակվել են Homenetmen Valence-ի հայ ֆուտբոլիստների վրա: Այս մասին գրում է ֆրանսիական Nouvelles Armenie պարբերականը:

Շրջանային առաջնության շրջանակներում սեպտեմբերի 29-ին հայ համայնքի ներկայացուցիչներից բաղկացած Homenetmen Valence -ն հերթական հանդիպումն է անցկացրել տեղի թուրքական համայնքը ներկայացնող FC Turquoise-ի հետ:

Առաջին խաղակեսից հետո, երբ Homenetmen Valence-ն հաղթում էր 2:0 հաշվով, թուրք երկրպագուները ներխուժել են խաղադաշտ՝ հարձակվելով հայ ֆուտբոլիստների վրա: Այս պահին հայ ֆուտբոլիստներից երկուսի վիճակը գնահատվում է ծայրահեղ ծանր:

Ֆրանսիական հեղինակավոր Le Figaro Magazine-ի փոխտնօրեն Ժան Քրիստոֆեր Բյուիսոնը X-ի իր միկրոբլոգում եւս մեկնաբանել է միջադեպը.

«Շրջանային ֆուտբոլային հանդիպման ժամանակ թուրք երկրպագուները, դժգոհ լինելով իրենց FC Turquoise թիմի՝ 2:0 հաշվից պարտությունից՝ դանակներով հարձակվել են հայկական ծագում ունեցող ֆուտբոլիստների վրա: Սա կոչվում է հարձակում՝ ռասսայական հողի վրա»:

ՄՐՑԱՇԱՐԻՑ ՓԱԽԵԼ ԵՆ ԴՈՊԻՆԳԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Հնդկաստանի Մոդինագար քաղաքում ծանրամարտի մրցաշարի 519 մասնակիցներից 219-ը «փախել» են մրցումներից այն բանից հետո, երբ այնտեղ են ժամանել Ազգային հակադոպինգային գործակալության աշխատակիցներ, հաղորդում է Amar Ujala թերթը:

252 տղամարդկանցից 126-ը եւ 177 կանանցից 93-ը հրաժարվել են մրցույթից:

Insidethegames-ի հաղորդմամբ՝ մարզիկները, որոնք հաջողությամբ հանդես են գալիս պետական առաջնություններում եւ ազգային մրցաշարերում, կարող են ստանալ ֆինանսական օգնություն, քոլեջում սովորելու եւ պետական կառույցներում աշխատելու հնարավորություն, բայց եթե դրական դոպինգ թեստ անցնեն, կորակազրկվեն եւ կպարտավորվեն վերադարձնել ստացած գումարը:

Նշվում է, որ այս պատճառով մրցումներ շատ քաշային կարգերում կամ չեն կայացել, կամ մասնակցել են մեկ-երկու մարզիկ:

● *Հոկտեմբերի 4-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կցուցադրվի «Մեր ճանապարհը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որտե՞ղ պետք է դիմի քաղաքացին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն ստանալու համար:

Անահիտ Նիկողոսյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)՝ ներկայացնելով դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի անապահովության բնութագրիչների մասին ամբողջական տվյալները հավաստող փաստաթղթեր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հիշեցնենք, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից: Պետական նպաստ ստանալու համար քաղաքացին պետք է դիմի իր փաստացի բնակության վայրի՝ պետական նպաստ տրամադրելու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Արամ Սողոմոնյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



«Այսօր ի՞նչ է նշանակում լինել հայ: Ես կուզենայի իմանալ, ի՞նչ է նշանակում լինել սփյուռքահայ, լավ ուտե՞լ, լավ խմե՞լ, ունենալ սեփական խանութ՞ եւ ցեղասպանության մասին խոսե՞լ, դա նշանակում է լինել հա՛յ..դա շատ քիչ է....». սա հատված է Շառլ Ազնավուրի՝ 2012 թվականին գրված հոդվածից:

5 տարի առաջ մենք կորցրինք հանճարեղ երգահան, մեծ հայ Շառլ Ազնավուրին: Այսօր նրա հիշատակի օրն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +18 + 21
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+ 4 + 8 +17 + 20
Լոռի	+ 6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+ 16 + 18 + 23 + 25

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*